think
TOGETHER

ԸՆԴԼԱՅՆՎԱԾ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ՁԵՌՆԱՐԿ ԾՆՈՂՆԵՐԻ և ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

2026 - 2027

«Ընդլայնված ուսուցման ծրագրի»
ձեռնարկ՝ ծնողների և աշակերտների համար

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թեմա	Էջ
Տեղեկություններ «Ընդլայնված ուսուցման ծրագրի» մասին • Առաքելություն • Էթիկայի կանոններ • Աշակերտների հետ աշխատակազմի շփումը՝ ծրագրից դուրս	**1**
Ծրագրի աշխատանքը • Աշխատանքային ժամեր • Անձնակազմ • Ծրագրի ստանդարտ ժամանակացույց • Բժշկական տվյալներ	**2 - 4**
Ծրագրի բաղադրիչներ • Ներածություն • Սննդարար խորտիկ և/կամ ընթրիք • Տնային աշխատանքի օգնություն • Ակադեմիական հարստացում • Ֆիզիկական ակտիվություն	**4 - 5**
Աշակերտների վարքի կանոններ • TK-8-ի համար գործող Think Together-ի պայմանագրեր • ավագ դպրոցում կիրառվող Think Together-ի սկզբունքները • Օրինակելի վարքի կանոններ • Կարգապահական ընթացակարգեր • Անձնական իրեր	**5 - 7**
Աշակերտների ներգրավման, հաճախելիության և արձակման կանոններ • Աշակերտների ներգրավման քաղաքականություն • Աշակերտների հաճախելիության քաղաքականություն • TK-8-ի Աշակերտների արձակման թույլտվության քաղաքականություն • Աշակերտների արձակում՝ ոտքով տուն գնալու կամ վարչաշրջանի կողմից/կանոնադրությամբ հաստատված ավտոբուսով միայնակ երթևեկելու համար • Ուշացումների/վաղաժամ արձակման քաղաքակաություն TK-8-ի աշակերտների համար • Տեղում/տարածքից դուրս անցկացվող՝ think together-ին չվերաբերող միջոցառմանըմասնակցելու համար արձակման քաղաքականություն TK-8-ի աշակերտների համար • TK-8-ի Աշակերտներին ուշ վերցնելու դեպքում անհրաժեշտ գործողությունները սահմանող քաղաքականություն • Աշակերտների անձնական տվյալներ • Աջակցություն ծրագրին • Աշակերտների տվյալների գաղտնիություն և համաձայնություն	**7 - 12**

Տեղեկություններ «Ընդլայնված ուսուցման ծրագրի» մասին

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ

Think Together-ը համագործակցում է դպրոցների հետ՝ երեխաներին հավելյալ հնարավորություններ ընձեռելու համար

ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ

Think Together-ը պարտավորվում է պահպանել էթիկայի կանոններին համապատասխանող վարքագծի բարձր չափանիշները մեր բոլոր գործողություններում: Այն է՝ տրամադրել ստույգ և ամբողջական տեղեկատվություն, ցուցաբերել զգուշություն և լինել բարեխիղճ, պահպանել բոլոր օրենքները, կանոնակարգերը և կազմակերպության քաղաքականությունները, ինչպես նաև քարոզել էթիկայի կանոններին համապատասխանող վարքագիծ: Think Together-ի բարեվարքությունն ու կազմակերպության հեղինակությունն, ի վերջո, կախված են յուրաքանչյուր աշխատակցի գործողություններից: Հետևաբար բոլոր աշխատակիցներից պահանջվում է ցուցաբերել էթիկայի կանոններին համապատասխանող և օրինապահ վարքագիծ:

Think Together-ն աշխատում է Ethical Advocate ընկերության հետ, որպեսզի վերջինս զբաղվի Think Together-ի էթիկային վերաբերող հաշվետվություններով: Հաշվետվության այս մեխանիզմը կոչված է խրախուսելու աշխատակիցներին, ինչպես նաև շահագրգիռ կողմերին՝ կամավորներին, աշակերտներին, ծնողներին/խնամակալներին և դպրոցի/վարչաշրջանի/կազմակերպության ղեկավարությանը, որպեսզի նրանք Think Together-ին տեղեկացնեն ենթադրյալ սխալ վարքագծի մասին: Դրա նպատակն է նաև վստահեցնելը, որ բոլոր մեղադրանքները մանրակրկիտ կերպով կուսումնասիրվեն և կձեռնարկվեն համապատասխան գործողություն(ներ): Անհրաժեշտության դեպքում աշխատակիցների նկատմամբ կկիրառվեն շտկող գործողություններ՝ ընդհուպ մինչև աշխատանքից ազատում: Քաղաքականությունը խախտելու դեպքում համապատասխան միջոցներ կձեռնարկվեն նաև այն անձանց նկատմամբ, որոնք աշխատակից չեն հանդիսանում:

Think Together-ի աշխատակիցները, կամավորները, աշակերտները, ծնողները/խնամակալները, դպրոցի/վարչաշրջանի/կազմակերպության ղեկավարությունը և մյուս շահագրգիռ կողմերը պետք է հաղորդեն ցանկացած անընդունելի համարվող դիպվածի կամ գործողության մասին՝ էթիկային վերաբերող խնդիրները բարձրացնելու համար նախատեսված՝ Think Together-ի անվճար 866-993-5153 հեռախոսահամարով կամ հետևյալ հղմամբ՝ https://thinktogether.ethicaladvocate.com/: Անվճար թեժ գիծն ու կայքէջը սպասարկվում են Ethical Advocate-ի կողմից: Էթիկային վերաբերող խախտումների մասին հաղորդումը դիտարկվում է որպես գաղտնի տեղեկատվություն և կարող է ներկայացվել անանուն:

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՇՓՈՒՄԸ՝ ԾՐԱԳՐԻՑ ԴՈՒՐՍ

Մեր աշակերտների, ինչպես նաև մեր աշխատակիցների պաշտպանության նպատակով Think Together-ը չի հանդուրժում, չի խրախուսում կամ որևէ կերպ թույլ չի տալիս շփվել կամ կապ ունենալ ծրագրի մասնակիցների հետ Think Together-ի սովորական աշխատանքային ժամերից կամ պարապմունքներից դուրս: Բացի այդ, Think Together-ի աշխատակիցներին չի թույլատրվում աշակերտներին տուն ուղեկցել, ինչպես նաև նրանց փոխադրամիջոց տրամադրել ծրագրի ավարտից հետո տուն գնալու կամ որևէ այլ միջոցառման գնալու կամ դրանից վերադառնալու համար: Աշակերտները երբեք չպետք է աշխատակիցներին տրամադրեն իրենց անձնական հեռախոսահամարները, էլ. փոստի հասցեները կամ սոց. կայքերի կոնտակտային տվյալները: Ծրագրի ժամերից դուրս մեր ծրագրի մասնակիցների հետ շփումն արգելված է:

Ծրագրի աշխատանքը

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԺԱՄԵՐ

Համաձայն օրենսդրության՝ TK-8-ի ընդլայնված ուսուցման ծրագրերը պետք է գործեն դպրոցն աշխատելու օրերին և սկսվեն դպրոցական օրվա ավարտից հետո: Աշխատանքային ժամերը կարող են տարբեր լինել՝ կախված դպրոցական ժամերից դուրս գործող ծրագրերի ֆինանսավորման պահանջներից: Աշխատանքային ժամերը կարող են տարբեր լինել՝ կախված արտադպրոցական ծրագրերի ֆինանսավորման պահանջներից: [Կալիֆոռնիայի Կրթական օրենսգիրք, Բաժին 8483(a)(1)]: Կարող են առաջարկվել ծրագրի հավելյալ կետեր: Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք դիմել ձեր ուսումնական հաստատության ծրագրի ղեկավարին: Օրենսդրությունը պահանջում է, որ սովորողները ընդգրկվեն ծրագրում ամբողջական օրով՝ ամեն այն օրը, որի ընթացքում մասնակցում են ծրագրին՝ ծրագրի նպատակներին հասնելու համար [Կալիֆոռնիայի Կրթական օրենսգիրք, Բաժին 8483(a)(2)]: Ավագ դպրոցի ծրագրերը կարող են գործել միայն դպրոցական օրվա ավարտից հետո կամ մինչև դպրոցական օրվա սկիզբը, հանգստյան օրերին, ամռանը, քննական շրջանի և արձակուրդների ընթացքում (Կրթական օրենսգիրք, Բաժին 8422[d]): ASSET ծրագիրը պետք է անցկացվի առնվազն շաբաթական 15 ժամ (Կրթական օրենսգիրք, Բաժին 8421[c]) և չի պահանջում աշակերտների մասնակցություն ամբողջական օրով՝ ամեն օր:

ԱՆՁՆԱԿԱԶՄ

- Հաստատության ծրագրի ղեկավարը (Site Program Manager, SPM) ապահովում է, որ բարձրորակ ընդլայնված ուսուցում տրամադրվի ծրագրում ընդգրկված յուրաքանչյուր աշակերտի: SPM-ները պետք է անցնեն Think Together-ի կողմից կազմակերպվող մի շարք դասընթացներ: Օգտագործելով Think Together-ի ծրագրի ստանդարտ նյութերը՝ SPM-ները համակարգում են ծրագրի ավագների աշխատանքները աշակերտների հետ և աջակցում նրանց, աշխատում են ուսուցիչների, տնօրենների և այլ աշխատակիցների հետ՝ համապատասխանեցնելու համար ընդլայնված ուսուցման ծրագրերը և առօրյա ուսումնական ծրագրերը, վերահսկում և ուղղորդում են աշխատակիցներին ն և տեղում իրականացնում որոշակի վերապատրաստում, աշխատում են ծնողների/խնամակալների հետ, ինչպես նաև հավաքագրում տվյալներ՝ վստահ լինելու համար, որ աշակերտները ապահով են, հաճախում են խմբակներ և բարելավում են իրենց ակադեմիական առաջադիմությունը:
- K-8-ի համար նախատեսված Think Together-ի ծրագրերում ծրագրի ավագներ (Program Leaders, PLs) են հանդիսանում կես դրույքով աշխատող օգնականները, որոնք պետք է համապատասխանեն վարչաշրջանի կողմից/կանոնադրությամբ հաստատված աշխատանքի տեղավորման պահանջներին՝ համաձայն «Յուրաքանչյուր աշակերտ պետք է հաջողի» անվանումով օրենքի (Every Student Succeeds Act, ESSA): Ծրագրի ավագները աշխատում են անմիջապես աշակերտների հետ՝ SPM-ի ղեկավարությամբ, և անցնում Think Together-ի կողմից կազմակերպվող մի շարք դասընթացներ: Ծրագրի ավագները վերահսկում և ղեկավարում են մինչև 20 աշակերտներից կազմված մեկ խումբ: Նրանք օգնում են աշակերտներին պատրաստել դասերը, վարում են ակադեմիական խմբակներ և ապահովում աշակերտների ֆիզիկական ակտիվությունը՝ օգտագործելով ծրագրի կողմից տրամադրված ուսումնական պլանը և նյութերը:
- Բարձր դասարաններում աշխատող ավագները (Older Youth Leaders, OYLs) անմիջական ծառայություններ են մատուցում ավագ դպրոցի ընդլայնված ուսումնական ծրագրերի աշակերտներին: Նրանք բազմաֆունկցիոնալ աշխատողներ են. կարող են վարել դասեր/խմբակներ, աշակերտներին տեղում խորհրդատվություն տրամադրել, կազմակերպել արշավներ և հատուկ միջոցառումներ: OYL-ները նաև պատասխանատու են բոլոր աշակերտների անվտանգության համար: Նրանք պետք է անցկացնեն այնպիսի դասեր և պարապմունքներ, որոնք օգնում են աշակերտներին սովորել և նպաստում են նրանց ներգրավվածությանը: Դասերին հատկացվող ժամանակը պետք է պլանավորվի և փոխհատուցվի: Բոլոր OYL-ները պետք է քոլեջում հավաքած լինեն առնվազն 40 միավոր, եթե ցանկանում են դիմել տվյալ հաստիքի համար:

ԾՐԱԳՐԻ ՍՏԱՆԴԱՐՏ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

- Դասերի ավարտից հետո աշակերտներն արդեն ենթարկվում են անմիջապես ծրագրի կանոններին՝ որպես գործընթացի մաս:
- Աշակերտները գրանցվում են, կազմում խմբեր, որոնք ղեկավարում են իրենց ծրագրի ավագները, արագ սնվում, զուգարան գնում և սկսում են պարապմունքները:
- Անվտանգության նկատառումներից ելնելով, աշակերտները (բացառությամբ ավագ դպրոցի) պարբերաբար օգտվում են զուգարանից: Արտակարգ իրավիճակներում Think Together-ի նշանակված աշխատակիցը կօգնի: Think Together-ի (հայերեն՝«Մտածենք միասին») աշխատակիցներին և կամավորներին արգելվում է օգնել ուսանողներին զուգարանում:
- Աշակերտներին առաջարկվում են ծրագրի տարբեր բաղադրիչներ, ներառյալ օգնություն դասերը պատրաստելիս, ակադեմիական խմբակներ և ֆիզիկական ակտիվություն:
- Ավագ դպրոցի համար նախատեսված ծրագրերի ընթացքում աշակերտները գրանցվում են, արագ սնվում և սկսում պարապմունքները ծրագրի աշխատակիցների ղեկավարությամբ: Աշակերտները կարող են մասնակցել մեկ օրվա ընթացքում առաջարկվող մի քանի ծրագրերի: Անվտանգության նկատառումներից ելնելով՝ նրանք ինքնուրույն գրանցվում են Think Together-ի բոլոր ծրագրերին մուտք գործելուց և դրանցից դուրս գալուց:
- Օրվա վերջում ՏԿ-6րդ դասարանի աշակերտները արձակվում են համապատասխան լիազորություն ունեցող աշխատակցի կողմից: Եթե դա հաստատված է վարչաշրջանի կողմից/կանոնադրությամբ, ապա միջին դպրոցի աշակերտները կարող են ոտքով տուն գնալ, եթե լրացրել են հետևյալ ձևաթուղթը՝ «Աշակերտի հայտ՝ ոտքով միայնակ տուն գնալու կամ վարչաշրջանի կողմից/կանոնադրությամբ հաստատված ավտոբուսով միայնակ երթևեկելու թույլտվություն ստանալու համար»:

Նշում.Որոշ խմբերի կամ դպրոցների կոնկրետ ժամանակացույցը կարող է տարբերվել այստեղ նկարագրվածից, սակայն բոլոր ծրագրերը ներառում են այս բոլոր բաղադրիչները: Ավագ դպրոցի համար նախատեսված ծրագրերը համարվում են ոչ պարտադիր, հետևաբար աշակերտները ըստ անհրաժեշտության են գրանցվում՝ դրանց մուտք գործելու և դրանցից դուրս գալու ժամանակ: Ավագ դպրոցի աշակերտները կարող են հաճախել ծրագրին ցանկացած ժամանակ, քանի դեռ այն անց է կացվում, և բավարարել դպրոցական ծրագրից դուրս ունեցած իրենց կարիքները:

ԲԺՇԿԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

Think Together-ի ծրագրում ընդգրկված յուրաքանչյուր աշակերտի բարեկեցությունը ապահովելու համար կարևոր է, որ ծնողները/խնամակալները ծրագրի անձնակազմին տեղեկացնեն ցանկացած առողջական խնդրի, ալերգիայի և/կամ հատուկ կարիքների մասին, որոնք կարող են անհանգստացնել իրենց երեխային ծրագրին հաճախելու ժամերին: Դպրոցի ուսուցիչներին և անձնակազմին նախկինում տրամադրված բժշկական տվյալները միշտ չէ, որ հասանելի են Think Together-ի ծրագրի աշխատակիցներին, ուստի պարտադիր է, որ բոլոր անհրաժեշտ տեղեկությունները փոխանցվեն անմիջապես ծրագրի անձնակազմին:

Եթե ծրագրի ժամերին աշակերտը վատ է զգում կան տեղի է ունենում դժբախտ պատահար, Think Together-ի անձնակազմը կարող է դիմել բժշկական օգնության՝ զանգահարելով 911 շտապ օգնության ծառայություն, կամ որևէ այլ կերպով բուժում ապահովել բժշկական հաստատությունում: Think Together-ը բժշկական խնամք չի ապահովում: Think Together-ի անձնակազմը դեղորայք չի տրամադրում և բժշական պատրաստվածություն չունի: Think Together-ը չի տրամադրում և չունի բժշկական ապահովագրություն կամ մասնակիցների ծածկույթ:

Ցանկացած աշակերտ, որին անհրաժեշտ է ընդունել բժշկի կողմից նշանակված դեղորայք (ներառյալ ինքնուրույն ընդունվող ինքնաներարկվող էպինեֆրինը), կարող է ինքնուրույն ընդունել տվյալ դեղամիջոցը Think Together-ի

ծրագրի ընթացքում՝ այն պայմանով, որ աշակերտը Think Together-ին կտրամադրի լրացված «Դեղամիջոցի ինքնուրույն ընդունման թույլտվություն և ազատում պատասխանատվությունից» ձևաթուղթը: Այս ձևաթուղթը պետք է ստորագրված և թվագրված լինի ծնողի/խնամակալի և աշակերտի բժշկի կողմից, վրան պետք է նշված լինի անհրաժեշտ դեղամիջոցի անվանումը և ինքնուրույն ընդունվող դեղաչափը (ներառյալ դեղամիջոցի ընդունման եղանակը, քանակը և ժամանակացույցը): Այն նաև պետք է հաստատի աշակերտի՝ դեղամիջոցը ինքնուրույն ընդունելու կարողությունը: Լրացնելով այս ձևաթուղթը՝ ծնողը/խնամակալը հաստատում են, որ իրենք տեղյակ են, որ Think Together-ը չունի բժշկական անձնակազմ, չի օգնելու դեղորայքն ընդունելիս և պատասխանատվություն չի կրի, եթե, օրինակ, աշակերտի մոտ կողմնակի ռեակցիա առաջանա դեղորայքն ինքնուրույն ընդունելու արդյունքում:

Ծրագրի բաղադրիչներ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Think Together-ն աշակերտների համար ապահովում է ուսուցման հարուստ փորձառություն՝ անվտանգ և աջակցող ուսումնական միջավայրում: Ծրագրերը ժամանակ են հատկացնում սնվելուն, ակադեմիական առաջադիմությանը, խմբակներին և ֆիզիկական ակտիվությանը: Ծրագրերն ապահովում են նաև սոցիալական և զգայական ուսուցման փորձառություն, ինչի շնորհիվ աշակերտները զարգացնում են հաջողության հասնելու իրենց հմտությունները:

ՍՆՆԴԱՐԱՐ ԽՈՐՏԻԿ և/ԿԱՄ ԸՆԹՐԻՔ

Վարչաշրջանի կողմից սահմանված՝ սննդին վերաբերող ուղեցույցների և ընթացակարգերի համաձայն՝ Think Together-ը ծրագրի ընթացքում աշակերտներին ապահովում է նախուտեստներով և ճաշով: Սնվելու ընթացքում աշակերտները հնարավորություն են ունենում շփվել հասակակիցների և ծրագրի անձնակազմի հետ:

- Սնունդ կարելի է օգտագործել միայն արագ սնվելու և/կամ ճաշի համար նախատեսված ժամին, ինչպես նաև այն դեպքերում, երբ սնունդն օգտագործվում է խմբակային կամ ուսումնական պարապմունքի կամ հատուկ միջոցառման ընթացքում: Անհատական դեպքերի համար այս քաղաքականության մեջ կարող են կատարվել բժշկական տեսանկյունից անհրաժեշտ ճշգրտումներ:
- Մինչև ծրագրի սկիզբը կամ ծրագրի ընթացքում աշակերտները չեն կարող լքել ուսումնական հաստատությունը՝ սնունդ ձեռք բերելու նպատակով:
- Ծնողները/խնամակալները ծրագրին մասնակցելու դիմումի մեջ պետք է նշեն սննդային ալերգիաների բոլոր տեսակները:

ՏՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

Դասապատրաստման ընթացքում աշակերտներին օգնելու նպատակն այն է, որ նրանք կարողանան սկսել իրենց տնային աշխատանքը և ծրագրի անձնակազմից ու կամավորներից ստանան օգնություն և աջակցություն այնտեղ, որտեղ դրա կարիքն ունեն: Մենք հույս ունենք, որ մեր կողմից տրամադրված աջակցության շնորհիվ աշակերտներն ավելի պատրաստ կլինեն՝ անհրաժեշտության դեպքում իրենց տնային առաջադրանքների մնացած մասը տանը ավարտելու համար:

Օրենքը պահանջում է, որ ծրագիրը ներառի կրթական և գրագիտությունը խթանող բաղադրիչ (օրինակ՝ օգնություն դասերը պատրաստելիս) և կրթական խմբակների բաղադրիչ [Կալիֆոռնիայի Կրթական օրենսգիրք, Բաժին 8482.3(c)]: Քանի որ երկու բաղադրիչներն էլ պարտադիր են, ծրագրի ընթացքում աշակերտները ոչ միշտ են կարողանում կատարել իրենց ԲՈԼՈՐ տնային առաջադրանքները, ինչպես նաև հնարավոր չի լինում դրանք ամբողջությամբ ստուգել և ուղղել:

Շատ ցանկալի է, որ ծնողը/խնամակալը պատասխանատվություն ցուցաբերի և ներգրավվի իր երեխայի ակադեմիական աշխատանքի մեջ, որպեսզի ուսուցման գործընթացը հնարավոր լինի շարունակել տանը:

Ավագ դպրոցում ակադեմիական աջակցության տարրը պետք է ներառի հետևյալներից առնվազն մեկը, սակայն չսահմանափակվի դրանով՝ կրկնուսուցում, մասնագիտական կողմնորոշում, օգնություն դասերը պատրաստելիս կամ նախապատրաստում քոլեջին՝ ներառյալ տեղեկություններ Cal Grant ծրագրի մասին, որը հաստատվել է Գլուխ 3-ի 5-րդ բաժնի 42-րդ մասի 1.7 կետի (սկսած հատված 69430-ից) համաձայն:

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՀԱՐՍՏԱՑՈՒՄ

Think Together-ի ակադեմիական խմբակների բաղադրիչը թույլ է տալիս աշակերտներին օգտագործել իրենց ակադեմիական հմտությունները՝ ներգրավվելով տարբեր պարապմունքների մեջ: Բացի այդ, որոշ դպրոցներ անց են կացնում նաև հատուկ ակադեմիական պարապմունքներ, ինչն օգնում է նրան, որ աշխատանքը կատարվի նաև դպրոցական օրվա ընթացքում:

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

Ավագ դպրոցի ծրագրերը ժամանակի կամ քանակի սահմանափակում չունեն: TK-8-ի համար ֆիզիկական ակտիվության բաղադրիչն ունի չորս հիմնական նպատակ.

- Ապահովել աշակերտների կանոնավոր ֆիզիկական ակտիվությունը 20-30 րոպեանոց պարապմունքների միջոցով:
- Ապահովել աշակերտների միջին կամ բարձր ինտենսիվության ֆիզիկական ակտիվությունը՝ ֆիզիկական ակտիվության համար նախատեսված ժամանակի առնվազն 40%-ի ընթացքում:
- Աշակերտներին ընձեռել պարապմունքներին մասնակցելու և իրենց հմտությունները կիրառելու բազմաթիվ հնարավորություններ:
- Աշակերտների համար կազմակերպել ֆիզիկական ակտիվություն ենթադրող տարբեր հաճելի պարապմունքներ:

Աշակերտների վարքի կանոններ

Think Together-ի առաջնային նպատակն է ապահովել անվտանգ և դրական միջավայր, որտեղ աշակերտներն ունեն դասապատրաստման ընթացքում օգնություն ստանալու և խմբակային պարապմունքներին մասնակցելու հնարավորություն:

TK-8-Ի ՀԱՄԱՐ ԳՈՐԾՈՂ THINK TOGETHER-Ի ՊԱՅՄԱՆՆԵՐ

Think Together-ը կարծում է, որ հենց աշակերտները պետք է պարտավորվեն պատշաճ վարք դրսևորել: Ուստի այն աշակերտներին, որոնք ցանկանում են մասնակցել մեր ծրագրին, մենք խնդրում ենք ընդունել Think Together-ի չորս պարզ կանոնները.

1. Լինել զգույշ
2. Լինել հարգալից
3. Լինել պատասխանատու
4. Լավ ժամանակ անցկացնել

Ծրագրի սկզբում մենք ժամանակ ենք հատկացնում՝ օգնելու համար աշակերտներին հասկանալ, թե ինչպես պետք է տարբեր հանգամանքներում հետևել այս կանոններին «Ընդլայնված ուսուցման ծրագրին» մասնակցելու ընթացքում, ինչպես նաև պարբերաբար անդրադառնում ենք այս թեմային ամբողջ տարվա ընթացքում:

Ակնկալվում է, որ մեր աշխատակիցները նույնպես կպահպանեն այս կանոնները աշակերտների, ծնողների/խնամակալների, գործընկերների և դպրոցի անձնակազմի հետ իրենց փոխհարաբերություններում:

ԱՎԱԳ ԴՊՐՈՑՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ THINK TOGETHER-Ի ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

1. Մենք ընտանիք ենք:
2. Մենք ուժեղ ենք:
3. Մենք առաջնորդներ ենք:

ՕՐԻՆԱԿԵԼԻ ՎԱՐՔԻ ԿԱՆՈՆՆԵՐ

Ելնելով վերը նշված նպատակներից և պայմանավորվածություններից՝ բոլոր աշակերտներից ակնկալվում է վարքագծի հետևյալ կանոնների պահպանումը.

1. Աշխատակազմի անդամներին, կամավորներին և մյուս աշակերտներին մշտապես վերաբերվել հարգանքով:
2. Հետևել աշխատակազմի անդամների կամ կամավորների կողմից տրված հրահանգներին:
3. Պատշաճ հարգանք ցուցաբերել շինությունների, տարածքների, սարքավորումների և պարագաների նկատմամբ:
4. Խոսել այնպիսի լեզվով և ցուցաբերել այնպիսի վարքագիծ, որը համապատասխանում է տվյալ միջավայրին (առանց հայհոյանքների, վիրավորական բառերի, վիճաբանությունների և այլն):
5. Մշտապես պահպանել անվտանգության կանոնները:
6. Ունենալ տնային առաջադրանքները կատարելու համար անհրաժեշտ բոլոր պարագաները, ներառյալ՝ դասագրքեր (եթե կիրառելի է), թուղթ, մատիտներ և այլն:
7. Տնային առաջադրանքները կատարելու/ուսումնառության ընթացքում աշխատել լուռ, առանց այլոց անհանգստացնելու:
8. Եթե տնային աշխատանք հանձնարարված չէ, աշակերտները պետք է կատարեն ծրագրի կողմից նախատեսված լրացուցիչ ակադեմիական հանձնարարություններ:

ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ

Այն դեպքերում, երբ աշակերտը խախտում է վերը նշված կանոններից որևէ մեկը, կիրառվում են հետևյալ կարգապահական ընթացակարգերը.

1. Անձնակազմը ուսանողին կներգրավի վերը նշված կանոնները խախտող վարքագծի արտացոլման և ուղղման գործընթացում՝ գրավոր ծանուցման անհրաժեշտությունից խուսափելու նպատակով:
2. Եթե այս վարքագիծը շարունակվի, ծնողներին/խնամակալներին կտրվի բանավոր և գրավոր նախազգուշացում:
3. Երկրորդ խախտման դեպքում ծնողը/խնամակալը կարող է գրավոր տեղեկացվել վարքագծի մասին, և աշակերտը կարող է մեկ կամ ավելի օրով հեռացվել ծրագրից:
4. Երրորդ խախտման դեպքում ուսանողը կարող է ընդմիշտ հեռացվել ծրագրից: Հեռացման մասին ծնողին/խնամակալի կարող է գրավոր ծանուցում տրվել:

Վարքագծի կանոնների լուրջ խախտումները կարող են հանգեցնել նրան, որ աշակերտը անմիջապես հեռացվի ծրագրից՝ հաստատության ծրագրի ղեկավարի և դպրոցի աշխատակազմի հայեցողությամբ: Մենք կապ կհաստատենք ծնողի/խնամակալի կամ այլ լիազորված անձի հետ և նրան կխնդրենք երեխային վերցնել:

ԱՆՁՆԱԿԱՆ ԻՐԵՐ

Աշակերտները պետք է խուսափեն Think Together-ի ծրագրին անձնական իրեր բերելուց (ներառյալ էլեկտրոնիկա, թանկարժեք կամ կոլեկցիոն իրեր): Ակնկալվում է, որ աշակերտները ողջամիտ նախազգուշական միջոցներ

կձեռնարկեն անձնական իրերը անվտանգ պահելու համար և կստանձնեն այդ իրերի հետ կապված ԲՈԼՈՐ ռիսկերը: Think Together-ը պատասխանատվություն չի կրում կորած, գողացված, վնասված կամ շարքից դուրս եկած իրերի համար, որոնք բերվել, օգտագործվել կամ լքվել են Think Together-ի ծրագրին մասնակցելու ընթացքում: Աշակերտները պետք է նաև հետևեն դպրոցի վարչաշրջանի կողմից կամ կանոնադրությամբ հաստատված քաղաքականությանը՝ թույլատրված և արգելված իրերի վերաբերյալ:

Աշակերտների ներգրավման, հաճախելիության և արձակման կանոններ

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Think Together-ը աշխատում է յուրաքանչյուր դպրոցի հետ՝ աշակերտներին ծրագրում ներգրավելու և ծնողներին/խնամակալներին ազատ տեղերի վերաբերյալ ծանուցելու համար: Եթե դիմումի ընդունման ժամանակ ազատ տեղեր չեն լինում, աշակերտը հերթագրվում է, և ծնողները/խնամակալները տեղեկացվում են՝ աշակերտի համար տեղ բացվելուն պես:

Համաձայն Կրթական օրենսգրքի 8483-րդ բաժնի՝ այն աշակերտները, որոնք անօթևան են, կամ որոնց ապաստան է տրամադրվել, ASES ծրագրերին ընդգրկվելու առաջնահերթ իրավունք ունեն: Եթե ձեր երեխան համապատասխանում է այս չափանիշներից որևէ մեկին, ապա գրանցման դիմումը լրացնելիս նշեք համապատասխան վանդակը:

Ծնողները/խնամակալը պետք է լրացնեն և ներկայացնեն ծրագրին մասնակցելու դիմումը նախքան աշակերտի մասնակցությունը ծրագրին: Ստորագրելով ծրագրին մասնակցելու դիմումը՝ ծնողը/խնամակալը հաստատում է, որ ստացել է սույն ձեռնարկը և համաձայն է ձեռնարկում ներկայացված քաղաքականությունների և ընթացակարգերի հետ: Ծրագրին մասնակցելու դիմումի ներկայացումը չի երաշխավորում Think Together-ի ծրագրերում ընդգրկումը: Think Together-ի ծրագրերում ընդգրկվելը ոչ թե իրավունք է, այլ արտոնություն, և եթե աշակերտը չի պահպանում ծրագրի կանոնները, կանոնակարգերը և քաղաքականությունները, ապա դա կարող է հանգեցնել կարգապահական տույժի, ինչը ներառում է, բայց չի սահմանափակվում կասեցումով կամ ծրագրից հեռացումով:

Ավագ դպրոցի ծրագրերը այնպես են կառուցված, որ բոլոր աշակերտները ծրագիր են ընդունվում գրանցվելուց հետո և կարող են անմիջապես սկսել հաճախելը:

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԱՃԱԽԵԼԻՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Think Together-ի համոզմամբ՝ հաճախումները հանդիսանում են այն կարևոր տարրը, որը որոշում է մեր աշակերտների ակադեմիական կյանքի վրա ունեցած ազդեցության մակարդակը: Բացի այդ, օրենքը սահմանում է, որ աշակերտները պետք է մասնակցեն ծրագրին ամբողջական օրով և ամեն օր՝ ծրագրի նպատակներին հասնելու համար [Կալիֆոռնիայի Կրթական օրենսգիրք, Բաժին 8483(a)(2) և AB-1567]:

Օրենքը պահպանելու և մեր ծրագրի արդյունավետությունն ապահովելու նպատակով՝ տարրական, միջին և/կամ կրտսեր ավագ դպրոցի աշակերտները պետք է մասնակցեն ծրագրին ամբողջական օրով և ամեն այն օրը, երբ դպրոցն աշխատում է, և աշակերտը ներկայացել է դպրոց: Սա կխթանի մասնակցությունը դպրոցի կողմից կազմակերպվող միջոցառումներին (օրինակ՝ սպորտային մրցումներ, վիզուալ/կատարողական արվեստի ներկայացումներ): Եթե հաճախումների այս պահանջը չկատարվի, աշակերտը կարող է հեռացվել: Եթե ծրագրին մասնակցել ցանկացող աշակերտների թիվն ավել է, քան ծրագրի հնարավորությունները, ապա առաջնահերթությունը տրվում է ամեն օր հաճախող աշակերտներին:

Թեև ավագ դպրոցի ծրագրերին հաճախելը պարտադիր չէ, աշակերտները ակտիվորեն հավաքագրվում են բազմաթիվ ծրագրերին մասնակցելու համար: Աշակերտների հաճախելիության առաջարկվող սխեման կարող է կազմվել նաև ըստ դպրոցական օրվա դասավորության:

<u>Փոփոխություններ Հաճախելիության քաղաքականության մեջ</u>

Ներկայության կանոնների փոփոխություններ կարող են կատարվել յուրաքանչյուր դեպքի համար առանձին, եթե դա բխում է ուսանողի լավագույն շահերից: Նման փոփոխությունները պետք է համաձայնեցվեն դպրոցի մակարդակի ծրագրի տնօրենի, դպրոցի վարչակազմի, ռիսկերի կառավարման բաժնի և ծնողների/խնամակալների հետ:

TK-8-Ի ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԱՐՁԱԿՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ձեր աշակերտի անվտանգությունն ապահովելու համար անհրաժեշտ է հետեվյալը.

- Եթե առկա չէ դպրոցի վարչաշրջանի կողմից/կանոնադրությամբ հաստատված որևէ այլ քաղաքականություն, և եթե համապատասխան ձևաթղթեր չեն լրացվել լիազոր ծնողի կողմից (այն ծնողի, որը տվյալները գրանցված են ծրագրին մասնակցելու դիմումի մեջ), ապա ձեր աշակերտը պետք է ամեն օր դուրս գա ծրագրից 18 տարեկան և ավելի բարձր տարիքի լիազորված չափահասի ուղեկցությամբ, ում տվյալները առցանց գրանցվել են ծրագրին մասնակցելու դիմումի մեջ: Ավագ դպրոցի ծրագրերում աշակերտներն իրենք են պատասխանատու մուտք ու ելքի ժամանակ գրանցվելու համար, և ծնողի թույլտվություն չի պահանջվում:
- Աշակերտները կարող են արձակվել միայն այն անձանց հետ, որոնց տվյալները առկա են գրանցման պորտալում՝ ծրագրին գրանցման դիմումի «Լիազորված կոնտակտներ» ներդիրում: Այն ծնողը/խնամակալը, որն ի սկզբանե լրացրել և ներկայացրել է ծրագրին մասնակցելու դիմումը, պարտավոր է գրանցել բոլոր այն անձանց, որոնք կարող են աշակերտին վերցնել դպրոցից, ներառյալ ընդհանուր խնամակալության իրավունք ունեցող ծնողները/խնամակալները:Think Together-ի անձնակազմը չի լուծում խնամակալության հետ կապված վեճերը: Եթե երկու ծնողները/խնամակալներն էլ գրանցված են որպես աշակերտին վերցնելու իրավունք ունեցող անձինք, աշակերտը կարող է ցանկացած օր արձակվել ծնողներից մեկի/խնամակալի հետ, եթե այլ բան նախատեսված չէ դատարանի կողմից: Այս դեպքերում պետք է տրամադրվի դատարանի կողմից հաստատված՝ խնամակալության պայմանագրի պատճենը:
- Այն ծնողը/խնամակալը, որն ի սկզբանե լրացրել և ներկայացրել է ծրագրին մասնակցելու դիմումը, պարտավոր է հաստատության ծրագրի ղեկավարին տրամադրել թարմացված կոնտակտային տվյալները և ծանուցել աշակերտին վերցնելու (ներառյալ արտակարգ իրավիճակները) իրավասություն ունեցող անձանց ցանկում ցանկացած փոփոխության մասին: Եթե ծնողի/խնամակալի տվյալները հեռացվում են ծրագրին մասնակցելու դիմումից, ապա պետք է ներկայացվի այն դատական որոշումը, որը հստակ և միանշանակ նշում է, որ մյուս ծնողը/խնամակալն այլևս աշակերտին վերցնելու իրավունք չունի: Տվյալների բոլոր փոփոխությունները պետք է արձանագրվեն ծրագրին մասնակցելու առցանց դիմումի մեջ կամ ծնողից/խնամակալից ստացված նամակում:
- Յուրաքանչյուր դպրոցի վարչաշրջան/կանոնադրություն սահմանում է այն հանգամանքները (եթե այդպիսիք կան), որոնց դեպքում աշակերտին թույլատրվում է ոտքով միայնակ տուն գնալ կամ միայնակ տուն երթևեկել վարչաշրջանի կողմից/կանոնադրությամբ հաստատված ավտոբուսով: Այն դեպքերում, երբ հանգամանքները դա պահանջում են, իսկ դպրոցի վարչաշրջանի կողմից/կանոնադրությամբ հաստատված քաղաքականությունը թույլ է տալիս, ոտքով միայնակ տուն գնալու կամ վարչաշրջանի կողմից/կանոնադրությամբ հաստատված ավտոբուսով միայնակ տուն երթևեկելու թույլտվությունը կարող է տրվել, եթե դա գրավոր կերպով պահանջում է ծնողը/խնամակալը, կամ թույլտվությունը առկա է ծրագրի գրանցման առցանց դիմումում: Թույլտվությունը տրամադրվում է անհատական հիմունքներով և միայն այն դեպքում, եթե ապահովվում է աշակերտի անվտանգությունը:
- Եթե առկա է ծնողի/խնամակալի գրավոր կամ ծրագրին մասնակցելու դիմումի մեջ լրացված առցանց թույտվությունը, աշակերտը նաև կարող է արձակվել ծրագրից՝ մասնակցելու Think Together-ի հետ

առնչություն չունեցող որևէ պարապմունքի, որն անց է կացվում տեղում կամ տարածքից դուրս: Պարապմունքը կարող է վարել դպրոցի վարչաշրջանի կողմից/կանոնադրությամբ հաստատված աշխատակիցը և/կամ երրորդ կողմ հանդիսացող մատակարարը:

- Արտակարգ իրավիճակների դեպքում ուսանողը կարող է ծրագրից արձակվել իրավապահ մարմինների աշխատակիցների հետ, եթե հնարավոր չէ կապ հաստատել ծնողի/խնամակալի կամ արտակարգ իրավիճակների համար լիազորված անձի (անձանց) հետ:
- Աշակերտների անվտանգությունն ապահովելու համար ցանկացած պահի կարելի է պահանջել աշակերտին վերցնող ծնողի/խնամակալի կամ լիազորված անձի լուսանկարը՝ անձը հաստատելու նպատակով:
- Think Together-ը ուսանողներին կհանձնի միայն լիազորված մեծահասակի՝ համալսարանի տարածքում նշանակված վերցնելու վայրում: Ոչ մի դեպքում ուսանողին թույլ չի տրվի մտնել կայանատեղի կամ տրանսպորտային միջոցներ՝ առանց լիազորված մեծահասակի ուղեկցության:
- Think Together-ը և նրա համայնքային գործընկերները պատասխանատվություն ՉԵՆ կրում աշակերտի հետ պատահած դեպքերի համար, որոնք տեղի են ունեցել մինչև Think Together-ի ծրագրերին ժամանելը կամ դրանցից դուրս գալուց հետո, ներառյալ այն դեպքերը, երբ նրանք գտնվում են Think Together-ի կողմից չվերահսկվող՝ տեղում/տարածքից դուրս անցկացվող ծրագրի/միջոցառման հսկողության ներքո կամ հսկողությունից դուրս:

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԱՐՁԱԿՈՒՄ՝ ՈՏՔՈՎ ՏՈՒՆ ԳՆԱԼՈՒ ԿԱՄ ՎԱՐՉԱՇՐՋԱՆԻ ԿՈՂՄԻՑ/ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԱՎՏՈԲՈՒՍՈՎ ՄԻԱՅՆԱԿ ՏՈՒՆ ԵՐԹԵՎԵԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Դպրոցի վարչաշրջանը/կանոնադրությունը սահմանում է այն հանգամանքները (եթե այդպիսիք կան), որոնց դեպքում աշակերտին թույլատրվում է ոտքով միայնակ տուն գնալ կամ միայնակ տուն երթևեկել վարչաշրջանի կողմից/կանոնադրությամբ հաստատված ավտոբուսով: Այն դեպքերում, երբ հանգամանքները դա պահանջում են, իսկ դպրոցի վարչաշրջանի կողմից/կանոնադրությամբ հաստատված քաղաքականությունը թույլ է տալիս, ոտքով միայնակ տուն գնալու կամ վարչաշրջանի կողմից/կանոնադրությամբ

հաստատված ավտոբուսով միայնակ տուն երթևեկելու թույլտվությունը կարող է տրվել, եթե դա գրավոր կերպով պահանջում է ծնողը/խնամակալը, կամ թույլտվությունը առկա է ծրագրի գրանցման առցանց դիմումում: Թույլտվությունը տրամադրվում է անհատական հիմունքներով և միայն այն դեպքում, եթե ապահովվում է աշակերտի անվտանգությունը: Թույլտվությունը տրվում է որոշակի ժամանակահատվածի համար՝ ոչ ավել, քան մեկ ուսումնական տարով: TK-8-ի աշակերտը չի կարող դուրս գալ միայնակ քայլելու կամ վարչաշրջանի կողմից/կանոնադրությամբ հաստատված ավտոբուսով միայնակ տուն երթևեկելու, քանի դեռ ծրագիրը չի ավարտվել: Բացառություն են կազմում այն դեպքերը, երբ կա հատուկ պայմանավորվածություն՝ նշված օրը կամ օրերին անհրաժեշտ վաղաժամ արձակման մասին, ինչն արձանագրված է ծնողի/խնամակալի կողմից ծրագրի գրանցման առցանց դիմումում: Վարչաշրջանի կողմից/կանոնադրությամբ հաստատված ավտոբուսով տուն երթևեկելու նպատակով աշակերտին արձակելու ժամը կարող է տարբերվել՝ կախված նշված երթուղու ավտոբուսների ժամանակացույցից: Այս քաղաքականությունը վերաբերում է ինչպես հիմնական, այնպես էլ լրացուցիչ ծրագրերին:

Ավագ դպրոցի բոլոր աշակերտներին թույլատրվում է ոտքով տուն գնալ կամ տուն երթևեկել վարչաշրջանի կողմից/կանոնադրությամբ հաստատված ավտոբուսով, եթե այլ բան չի նշվում ծնողի/խնամակալի կողմից:

ՈՒՇԱՑՈՒՄՆԵՐԻ/ՎԱՂԱԺԱՄ ԱՐՁԱԿՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ TK-8-Ի ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Օրենքը պահանջում է, որ ծրագիրը քաղաքականություն մշակի աշակերտների ամենօրյա ողջամիտ վաղաժամ արձակման վերաբերյալ [Կալիֆոռնիայի Կրթական օրենսգիրք, Բաժին 8483(a)(1)]: Ծրագրից վաղաժամ արձակման, ինչպես նաև ծրագրին ուշ ժամանելու անհրաժեշտությունը հաշվի առնելու, ինչպես նաև օրենքի պահանջները բավարարելու նպատակով՝ Think Together-ն ընդունել է Ուշացումների/վաղաժամ արձակման հետևյալ քաղաքականությունը.

Որպեսզի Think Together-ի «Ընդլայնված ուսուցման ծրագիրը» որակավորվի պետական ֆինանսավորման համար, իսկ աշակերտների փորձառությունը բազմակողմանի լինի, նրանք պետք է մասնակցեն ամբողջական ծրագրին՝ համաձայն Կրթական օրենսգրքի 8483(a)(1) բաժնի: «Ընդլայնված ուսուցման ծրագրին» մասնակցելու փորձառությունը կարող է բազմակողմանի լինել, եթե աշակերտները հաճախում են շաբաթական հինգ օր՝ դպրոցական օրվա ավարտից անմիջապես հետո մինչև ծրագրի ավարտը:

Անվտանգության նկատառումներից ելնելով, Think Together-ի քաղաքականությունը պահանջում է, որ ուսանողները դասի գան ժամանակին, և ուսանողների ուշացման ցանկացած դեպք պետք է գրանցվի անձնակազմի կողմից: Ուշացումը սահմանվում է որպես ծրագրի սկզբում գրանցման սովորական ժամանակահատվածից հետո ցանկացած պահ և կարող է լինել կամ «պատահական» կամ «կրկնվող»: «Կանոնավոր» նշանակում է իրավիճակ, երբ աշակերտը դպրոցից վերցվում է շաբաթական առնվազն մեկ անգամ՝ նույն ժամին, ամբողջ ուսումնական տարվա ընթացքում: Լրացուցիչ ծրագրի դեպքում ծնողը/խնամակալը կամ աշակերտին միջոցառմանը տեղափոխելու լիազորություն ունեցող անձը պետք է պատճառաբանի աշակերտի ուշացումը:

Եթե աշակերտը չի կարող մասնակցել ծրագրին ամբողջ օրվա ընթացքում, ծնողը/խնամակալը կարող է թույլատրել, որ աշակերտին ծրագրից վաղաժամ արձակեն: Վաղաժամ է համարվում այն արձակումը, որը տեղի է ունենում ծրագրի ավարտից հետո իրականացվող՝ սովորական արձակման ժամանակից ավելի շուտ, և կարող է լինել «մեկանգամյա» կամ «կրկնվող»: Մեկանգամյա վաղաժամ արձակման դեպքում աշակերտին վերցնելու համար ծնողի/խնամակալի կողմից նախկինում լիազորված անձը/անձերը կարող է նաև թույլատրել վաղաժամ արձակումը, եթե տվյալ օրը աշակերտին վերցնելու է ավելի շուտ:

Եթե ծնողը/խնամակալը ցանկանում է, որ աշակերտն ուշ ժամանի կամ կանոնավոր կերպով պարբերաբար վաղաժամ արձակվի, օրինակ՝ շաբաթական կրկնուսուցման դասընթացի կամ կրոնական պարտավորության համար, ապա նա պետք է դա նշի ծնողի մասնակցության առցանց դիմումի մեջ կամ ներկայացնի ուշացման/վաղաժամ արձակման ստորագրված ձևաթուղթը՝ նշելով պատճառը և այն ժամանակահատվածը (ժամերը և ժամկետները), որի ընթացքում տեղի են ունենալու ուշացումները/վաղաժամ արձակումները:

Լիազորված անձից/անձանցից պահանջվում է գրանցել ուշացումները և վաղաժամ արձակումները, ինչպես նաև/կամ աշակերտների արձակումը Think Together-ի կողմից չվերահսկվող՝ տեղում/տարածքից դուրս անցկացվող ծրագրին/միջոցառմանը մասնակցելու համար: Պատճառ կարող են հանդիսանալ հետևյալ կետերը.

1. Խմբակային պարապմունքներ (մասնակցություն Think Together-ի կողմից չվերահսկվող՝ տեղում/տարածքից դուրս անցկացվող ծրագրին/միջոցառմանը կամ տարածքից դուրս անցկացվող պարապմունքին՝ ակումբային ֆուտբոլ, բասկետբոլ և այլն)
2. Ակադեմիական աջակցություն (աշխատանք աշակերտի ուսուցչի հետ դպրոցից հետո և այլն)
3. Ընտանեկան արտակարգ իրավիճակներ (օրինակ՝ մահվան դեպք ընտանիքում, աղետալի միջադեպեր և այլն)
4. Բժշկական այցեր
5. Երեխայի հետ տեղի ունեցած դժբախտ պատահար/հիվանդություն
6. Փոխադրում
7. «Dark 30»՝ արձակում շուտ մթնելու պատճառով (Այն աշակերտների վաղաժամ արձակումը, որոնք ոտքով են տուն գնում: Սովորաբար այսպես է լինում է նոյեմբերից մինչև մարտի կեսը: Արձակման ժամերը նախապես սահմանվում են հաստատության աշխատակազմի կողմից)
8. Այլ պատճառ (երեխայի շահերից ելնող)

Բազմաթիվ աշակերտներ են ցանկանային մասնակցել Think Together-ին, սակայն ծրագրի տեղերը սահմանափակ են: Ուշացումների և վաղաժամ արձակումների քանակը պետք է նվազագույնի հասցվի: Եթե Think Together-ի անձնակազմը կարծի, որ խնդիր կա, նրանք կկապվեն ծնողի/խնամակալի հետ՝ քննարկելու իրավիճակի լուծման ուղիները:

ՏԵՂՈՒՄ/ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԱՆՑԿԱՑՎՈՂ՝ THINK TOGETHER-ԻՆ ՉՎԵՐԱԲԵՐՈՂ ՄԻՋՈՑԱՌՄԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՐՁԱԿՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ TK-8-Ի ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Աշակերտների անվտանգությունից ելնելով՝ Think Together-ը գրանցում է աշակերտների արձակումը Think Together-ի կողմից չվերահսկվող՝ տեղում/տարածքից դուրս անցկացվող ծրագրին/միջոցառմանը մասնակցելու համար: Եթե ծնողը/խնամակալը ծնողի մասնակցության առցանց դիմումի մեջ դա լիազորել է, աշակերտը կարող է դուրս գալ Think Together-ի պատասխանատվության դաշտից՝ մասնակցելու Think Together-ին չբերաբերող որևէ ծրագրի/պարապմունքի, որն անց է կացվում տեղում կամ տարածքից դուրս, իսկ այն վարում է դպրոցի վարչաշրջանի կողմից/կանոնադրությամբ հաստատված աշխատակիցը և/կամ երրորդ կողմ հանդիսացող մատակարարը: Think Together-ի աշխատակիցները պետք է գրանցեն արձակման ժամն ու պատճառը: Think Together-ը չունի համապատասխան աշխատակից, որը կարող է Think Together-ի կազմակերպած պարապմունքներից ազատված աշակերտներին ուղեկցել ոչ Think Together-ի կողմից կազմակերպած պարապմունքներին: Եթե աշակերտը չի վերադառնալու Think Together-ի ծրագրին նախքան ծրագրի ավարտը, նա պետք է ինքնուրույն գրանցվի ծրագրից դուրս գալուց, իսկ ծնողը/խնամակալը պատասխանատվություն կրի մյուս ծրագրից/պարապմունքից արձակման հետ կապված պայմանավորվածություններ ձեռք բերելու համար:

TK-8-Ի ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ ՈՒՇ ՎԵՐՑՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆՈՂ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Կարևոր է, որ աշակերտներին ժամանակին վերցնեն, հատկապես այն պատճառով, որ «Ընդլայնված ուսուցման ծրագիրը» ավարտվում է երեկոյան, երբ դպրոցի մյուս մասն արդեն փակ է, և շատ քիչ աշխատակիցներ են մնացել դպրոցում: Սա կարող է առաջացնել անվտանգության հետ կապված խնդիրներ, քանի որ ծրագրի ավարտից հետո դպրոցում մնում են միայն փոքր թվով աշակերտներ և ընդլայնված ուսուցման ծրագրի աշխատակիցներ:

- Աշակերտներին պետք է ժամանակին վերցնել:
- Եթե աշակերտին վերցնող անձը ուշանում է, մենք խնդրում ենք, որ նա կապվի հաստատության ծրագրի ղեկավարի հետ և անմիջապես տեղեկացնի այդ մասին: Պատճառն այն է, որ այդպիսի դեպքերում անհրաժեշտ է լինում աշխատանքային ժամանակացուցում կատարել համապատասխան փոփոխություններ, քանի որ առաջացել է արտաժամյա աշխատանքի անհրաժեշտություն:
- Եթե աշակերտին շարունակաբար ուշ են վերցնում, նա կարող է հեռացվել ծրագրից:
- Բացի այդ, երբ աշակերտին ժամանակին չեն վերցնում, և մենք չենք կարողանում կապվել նրան վերցնող՝ լիազորված անձանցից որևէ մեկի հետ կամ արտակարգ դեպքերի համար լիազորված որևէ անձի հետ, մենք դիմում ենք իրավապահ մարմիններին:

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

Think Together-ը պահպանում է գործող նահանգային և դաշնային օրենքները, ներառյալ «Ընտանիքի կրթական իրավունքների և գաղտնիության մասին օրենքը» (Family Educational Rights and Privacy Act, FERPA), որը վերաբերում է աշակերտների մասին տեղեկությունների ուսումնասիրությանը և գաղտնիությանը: Համաձայն այս օրենքի և դպրոցի հետ պայմանագիր կնքած վարչաշրջանի ցուցումի՝ ծնողները/խնամակալներն իրավունք ունեն ծանոթանալ իրենց աշակերտի մասին տեղեկություններին՝ առաջին իսկ պահանջով: Բացի այդ, ծնողները/խնամակալներն իրավունք ունեն շտկել աշակերտին վերաբերող տեղեկությունն այն դեպքում,

երբ այն սխալ է կամ ապակողմնորոշող: Աշակերտների մասին տեղեկությունները գաղտնի են պահվում՝ բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

Աշակերտների մասին տեղեկությունները հասանելի են բոլոր ծնողներին/խնամակալներին, եթե չկա դատարանի հակառակ որոշում, որը տրամադրվել է հաստատության ծրագրի ղեկավարին: Մենք խնդրում ենք մեզ տրամադրել մինչև երկու շաբաթ ժամանակ՝ ուսանողների ամենօրյա հաճախումների մասին գրանցումները պատրաստելու համար, քանի որ դրանք ձեռքով լրացված ձևաթղթեր են, պահվում են տարածքից դուրս և մինչև տրամադրելը խմբագրման կարիք ունեն՝ այլ աշակերտներին վերաբերող տեղեկությունների գաղտնիությունը պահպանելու նպատակով:

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԾՐԱԳՐԻՆ

Աշակերտի դրական փորձառությունն ապահովելու համար ծնողները/խնամակալները, դպրոցի աշխատակազմը և Think Together-ի մասնագետները պետք է համատեղ աշխատեն: Բոլոր կանոններն ու ընթացակարգերը մշակված են ուսանողների համար անվտանգ և հյուրընկալ միջավայր ստեղծելու և իրավական ու ֆինանսական կանոնակարգերով սահմանված չափանիշները պահպանելու համար: Ծրագրին վերաբերող հարցերն ու մտահոգությունները, այդ թվում՝ ուսանողի վարքագծի վերաբերյալ տեղեկատվությունը, պետք է լուծվեն մասնագիտորեն և քաղաքավարի: Անպատշաճ վարքագիծը ուսանողներին չի ցույց տալիս խնդիրների լուծման արդյունավետ ռազմավարություններ և անընդունելի է: Think Together-ը և մեր դպրոցական գործընկերներն իրավունք ունեն արգելել ցանկացած մեծահասակի(ների) գտնվել դպրոցի տարածքում և/կամ կասեցնել աշակերտի մասնակցությունը ծրագրին, եթե մեծահասակը ցուցաբերում է ոչ պրոֆեսիոնալ վարքագիծ կամ սպառնալիք է ներկայացնում աշխատակազմի, աշակերտների կամ դպրոցի աշխատակիցների համար:

Մեր ծրագրերի շրջանակներում իրականացվող կամավորական աշխատանքներով հետաքրքրվածները կարող են տեղեկատվություն գտնել այստեղ՝ https://thinktogether.org/volunteer/

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

Ստորագրելով ծրագրին մասնակցելու դիմումի ձևաթուղթը՝ դուք համաձայնում եք «Ծնողների և աշակերտների համար ձեռնարկում» ներկայացված բոլոր քաղաքականություններին: Բացի այդ, դուք հասկանում եք և ձեր համաձայնությունն եք տալիս երրորդ կողմի սեփականություն հանդիսացող առցանց ուսուցման հարթակների օգտագործման վերաբերյալ հետևյալ հայտարարություններին.

Ես հասկանում եմ, որ Think Together-ը կարող է թույլատրել երրորդ կողմ հանդիսացող մատակարարի առցանց ուսուցման հարթակի օգտագործումը, որն իմ երեխային հնարավորություն է տալիս ուսումնասիրել պետական ստանդարտներով սահմանված առարկաները (ներառյալ, բայց չսահմանափակվելով «անգլերեն լեզու» և «մաթեմատիկա« առարկաներով)՝ այս առարկաների գիտելիքները բարելավելու նպատակով: Ես հասկանում եմ, որ իմ երեխայի անունը, դասարանը և դպրոցական ID-ն կարող են տրամադրվել մատակարարին՝ իմ երեխայի համար օգտատիրոջ հաշիվ ստեղծելու համար, և որ առցանց ուսուցման հարթակում առկա՝ իմ երեխայի գնահատման արդյունքները նույնպես կարող են պահվել մատակարարի մոտ և վերահսկվել Think Together-ի անձնակազմի կողմից՝ երեխայիս աճին օգնելու համար: Ես հասկանում եմ, որ ցանկացած պահի կարող եմ հարցում ներկայացնել և մուտք գործել իմ երեխայի հաշիվ, ինչպես նաև ծանոթանալ նրա առաջընթացի վերաբերյալ տեղեկություններին՝ կապվելով Think Together-ի՝ հաստատության ծրագրի ղեկավարի հետ: